ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/19

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Օլէդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 25.01.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2022թ. թիվ 26/26-1/948-2022 գրությամբ «Օլէդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.01.2022թ. թիվ ՊՆ/02/133-2022 գրության հիման վրա, 19.01.2022թ. թիվ 26/26-1/948-2022 գրությամբ նախաձեռնել է «Օլէդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Օլէդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Օլէդ» ՍՊԸ-ն 31.01.2022թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՕԼԷԴ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

«ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/, որով մատակարարման վերջնաժամկետ է սահմանված մինչև 30.11.2021թ.:

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Պայմանագրի 8.6 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել միչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ միչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանգրով սահմանված ժամկետն է:

«ՕԼԷԴ» ՍՊԸ-ն 23.11.2021թ. գրությամբ /կցվում է/ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարության հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ ՊՆ և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագրի /թվով 111 հատ հեռուստացույց/ շրջանակներում ապրանքների մատակարարման ժամանակացույցը սահմանված է եղել մինչև 30.11.2021թ. համաձայն պայմանգրի Հավելված 1-ի: «ԶԻԶԻ» ՍՊԸ բեռնափոխադրող ընկերությունը, որը հանդիսանում է «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագրի շրջանակում «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի՝ Չինաստան-Հայաստան բեռնափոխադրող ընկերության ներկայացուցիչը, իր գրությամբ փաստում է /կցվում է/, որ ուղեբեռը սույն թվականի նոյեմբերի 18-ից գտնվում է ԻԻՀ Բանդար Աբբաս նավահանգստում, սակայն պայմանավորված համաշխարհային համավարակով /COVID-19/, ինչպես նաև առավել պայմանավորված Իրան-Հայաստան բեռնափոխադրման ճանապարհների փոփոխություններով՝ ՀՀ-ում տեղակայված նոր անցակետերով, որն առաջացրել է, ինչպես ճանապարհային խցանումներ, այնպես էլ Իրան-Հայաստան բեռնափոխադրումների կրճատում, ստեղծել է ֆորս-մաժորային իրավիճակ, ինչի արդյունքում մատակարարումը հետաձգվել է անորոշ ժամանակահատվածով: Հաշվի առնելով, որ գնման գործընթացը տեղի է ունեցել սեպտեմբեր ամսին, իսկ այդ ժամանակահատվածում նման խնդիրներ առկա չեն եղել և հետագայում հնարավոր չէր կանխատեսել, որ կարող է առաջանալ ֆորս-մաժորային իրավիճակ, խնդրում եմ պայմանգրի ժամկետը երկարացնել մինչև 30 օրացուցային օրով, հիմք ընդունելով Պայմանագրի 7-րդ և 8.6-րդ կետերը:»

Այնուհետև, «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն 28.11.2021թ. գրությամբ կրկին /կցվում է/ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ ՊՆ և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագրի /թվով 111 հատ հեռուստացույց/ շրջանակներում ապրանքների մատակարարման ժամանակացույցը սահմանված է եղել համաձայն պայմանգրի Հավելված 1-ի: Պայմանավորված համաշխարհային համավարակով /COVID-19/, ինչպես նաև պայմանավորված եղանակային պայմաններով և խցանումներով ստեղծվել է ֆորս-մաժորային իրավիճակ: Տեղեկացնում ենք Ձեզ, որ այս պահին ուղեբեռը գտնվում է ԻԻՀ և ՀՀ պետական սահմանին /Մեղրիիր մաքսակետում/: Բեռնափոխադրող ընկերության հավաստմամբ ապրանքները ՀՀ, ք. Երևանում կլինեն երկօրյա ժամկետում, սակայն չկանխատեսված խնդիրներով պայմանավորված խնդրում ենք պայմանագրի

կատարման համար տրամադրել առավելագույնը մեկ շաբաթյա ժամկետ ապրանքները սահմանից հասցնել Երևան մաքսազերծել և մատակարարել նշված հասցե»:

Սակայն, «ՕԼԷԴ» ՍՊԸ-ին ուղղված 07.01.2022թ. գրությամբ (կցվում է)՝ ՀՀ պաշտպանության նախարարության նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշել ենք՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագիր:

«ՕԼԷԴ» ՍՊԸ-ն 23.11.2021թ. գրությամբ դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարության հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ ՊՆ և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագրի /թվով 111 հատ հեռուստացույց/ շրջանակներում ապրանքների մատակարաման ժամանակացույցը սահմանված է եղել մինչև 30.11.2021թ. համաձայն պայմանգրի Հավելված 1-ի: «ԶԻԶԻ» ՍՊԸ բեռնափոխադրող ընկերությունը, որը հանդիսանում է «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագրի շրջանակում «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի՝ Չինաստան-Հայաստան բեռնափոխադրող ընկերության ներկայացուցիչը, իր գրությամբ փաստում է, որ ուղեբեռը սույն թվականի նոյեմբերի 18-ից գտնվում է ԻԻՀ Բանդար Աբբաս նավահանգստում, սակայն պայմանավորված համաշխարհային

համավարակով /COVID-19/, ինչպես նաև առավել պայմանավորված Իրան-Հայաստան բեռնափոխադրման ճանապարհների փոփոխություններով՝ ՀՀ-ում տեղակայված նոր անցակետերով, որն առաջացրել է, ինչպես ճանապարհային խցանումներ, այնպես էլ Իրան-Հայաստան բեռնափոխադրումների կրճատում, ստեղծել է ֆորս-մաժորային իրավիճակ, ինչի արդյունքում մատակարարումը հետաձգվել է անորոշ ժամանակահատվածով: Հաշվի առնելով, որ գնման գործընթացը տեղի է ունեցել սեպտեմբեր ամսին, իսկ այդ ժամանակահատվածում նման խնդիրներ առկա չեն եղել և հետագայում հնարավոր չէր կանխատեսել, որ կարող է առաջանալ ֆորս-մաժորային իրավիճակ, խնդրում եմ պայմանգրի ժամկետը երկարացնել մինչև 30 օրացուցային օրով, հիմք ընդունելով Պայմանագրի 7-րդ և 8.6-րդ կետերը:»

Ստանալով որևէ արձագանք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն 28.11.2021թ. գրությամբ կրկին /կցվում է/ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարության հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ ՀՀ ՊՆ և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագրի /թվով 111 հատ հեռուստացույց/ շրջանակներում ապրանքների մատակարաման ժամանակացույցը սահմանված է եղել համաձայն պայմանգրի Հավելված 1-ի: Պայմանավորված համաշխարհային համավարակով /COVID-19/, ինչպես նաև պայմանավորված եղանակային պայմաններով և խցանումներով ստեղծվել է ֆորս-մաժորային իրավիճակ: Տեղեկացնում ենք Ձեզ, որ այս պահին ուղեբեռը գտնվում է ԻԻՀ և ՀՀ պետական սահմանին /Մեղրիիր մաքսակետում/: Բեռնափոխադրող ընկերության հավաստմամբ ապրանքները ՀՀ, ք. Երևանում կլինեն երկօրյա ժամկետում, սակայն չկանխատեսված խնդիրներով պայմանավորված խնդրում ենք պայմանագրի կատարման համար տրամադրել առավելագույնը մեկ շաբաթյա ժամկետ ապրանքները սահմանից հասցնել Երևան մաքսազերծել և մատակարարել նշված հասցե»:

Գտնում ենք, որ Պատվիարտուն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Պայմանգրի 8.6 կետով սահմանված դրույթները, մասնավորապես՝ Պայամանագրի 8.6 կետով հստակ ամրագրված է, որ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ միչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանգրով սահմանված ժամկետն է:

1. Պայմանագրի 8.6 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Ընկերությունը՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետ՝ Կարգ) հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և N ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/8-1 գնման Պայմանագրի 8.6 կետը 2021 թվականի նոյեմբերի 23-ին (Պայմանագրի ժամկետի ավարտից 7 օրացուցային օր առաջ) գրությամբ դիմել է Պատվիրատուին Պայմանագրի ժամկետը մինչև 30 օրացուցային օրով երկարաձգելու խնդրանքով, սակայն Պատվիրատուի կողմից այդպես էլ ոչ մի բովանդակային Պատասխան չի ուղարկվել Ընկերությանը:

Արդյունքում խախտվել է «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի իրավունքները, ինչպես նաև պատասխանի բովանդակությունից կախված բողոքարկելու հնարավորությունը և Ընկերությունը հայտնվել է անորոշության մեջ և չնայած այդ բոլոր հանգամանքներին, Ընկերությունը ձեռնարկել է բոլոր միջոցները, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Ի ապացույց վերը նշվածի, Ձեզ ենք ներկայացնում Ընկերության կողմից ձեռք բերվող ապրանքի համար կատարված փոխանցման անդորրագրերը, բեռնափոխադրող ընկերությունների կողմից ներկայացված գրությունները և փաստաթղթերը (կցվում են), որոնք փաստում են, որ բեռնափոխադրման ուշացումը պայմանավորված է եղել ոչ միայն համաշխարհային համավարակով (COVID 19), այլ նաև պայմանավորված է եղել ամանորյա նախաշեմին տեղի ունեցած բեռնափոխադրումների կտրուկ աճով, ստեղծելով մասամբ ֆորս-մաժորային իրավիճակ: Ընկերությունը նաև լրացուցիչ միջոցներ էր ձեռնարկել բանակցելով տեղի մեծածախ տեխնիկայի վաճառքով զբաղվող ընկերությունների հետ, որ ըստ անհրաժեշտության համապատասխան ապրանքները ձեռք բերեր վնասներ կրելու արդյունքում, բայց ստանձնած պատավորությունները պատշաճ կատարեր: Հաշվի առնելով, որ Պատվիրատուն գրությանը չի պատասխանել և 30 օրացուցային օրն էլ մոտենում էր ավարտին, ինչպես նաև տեղեկություն փոխանցվեց, որ ապրանքները հատել են ԻՀՀ և ՀՀ միջպետական սահմանը, Ընկերության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 27-ին գրություն է ուղարկվել

ՀՀ պաշտպանության փոխնախարար՝ պրն Բրուտյանին խնդրանքով (գրությունը կցվում է), որ առավելագույնը մեկշաբաթյա ժամանակ տրամադրել ապրանքների մաքսազերծման և մատակարարման համար: Այնուհետև, 2022 թվականի հունվարի 5-ին Ընկերության ներկայացուցիչը փորձել է կապ հաստատել Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման հետ՝ ապրանքները մատակարարելու նպատակով (ցանկանում եմ տեղեկացնել, որ մինչ այդ պահը մաքսային մարմինները ևս մի քանի օրով չեն աշխատել), սակայն կապ հաստատել չի հաջողվել: Արդյունքում Ընկերության ներկայացուցիչը համապատասխան փաստաթղթերով (հաշիվ-ապրանքագիր, ակտ, արձանագրություն) մոտեցել է մատակարարման հասցե, արդյունք չլինելու պատճառով այնուհետև մոտեցել է ՀՀ պաշտպանության նախարարություն, ք. Երևան, Բագրեվանդի 5 հասցե, ներքին հեռախոսահամարներով փորձել է կապ հաստատել համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ ապրանքի նմուշը փորձարկելու և այնուհետև ողջ խմբաքանակը հանձնելու նպատակով, սակայն արհեստական խնդիրների պատճառով այդպես էլ չի հաջողվել կապ հաստատել ապրանքն ընդունող Պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի հետ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, այս անգամ 2022 թվականի հունվարի 10-ին ժամը 13:33-ին Ընկերության կողմից գրություններ է (գրությունները կցվում են) ուղարկվել ՀՀ ՊՆ նախարար պրն. Ս Պապիկյանին և ՀՀ ՊՆ տեղակալ պրն. Կ. Բրուտյանին՝ խնդրանքով, ընդառաջել և հնարավորություն ընձեռնել ապրանքները մատակարարելու համար: Գրություններից գրեթե մեկ ժամ անց, նույն օրը ժամը 14:48 (հրապարակված է տեղեկագրում) Ընկերությունը ծանուցվում և տեղեկագրում հրապարակվում է պայմանագիրը միակողմանի լուծման մասին հայտարարությունը:

2. Համաձայն Պայմանագրի 8.1 կետի՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Վերը նշված փաստերով պայմանավորված պետք է եզրահանգել, որ Պայմանագիրը ուժի մեջ է եղել մինչև 11.01.2022թ.-ը, և փաստել, որ մինչ այդ գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, ավելին 11.01.2022թ.-ին կրկին վերահրապարակվել է հեռուսատացույցերի ձեռքբերման մրցույթ: Այս պարագայում հարց է առաջանում, իսկ ինչով է պայմանավորված նման հապճեպ որոշման կայացումը, երբ պայմանագրի լուծման ծանուցման հաջորդ օրը կրկին հեռուստացույցերի գնման պահանջ է առաջանում, իսկ մինչ այդ ժամանակահատվածը Ընկերության կողմից բազմաթիվ փորձեր է արվել ապրանքների մատակարարումը կազմակերպելու համար: Ուստի, գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուղարկված գրության հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը «ՕԼԷԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու նպատակով իրավաչափ չէ և ենթակա է մերժման:

3. Բացի այդ՝ քննության ենթակա է նաև այն փաստական հանգամանքը, որ ապրանքը դեկտեմբերի վերջ գտնվել է ՀՀ, իսկ 2022թ. հունվարին ք. Երևանում, ու այդ ժամանակահատվածից ի վեր Ընկերությունից կախված ամենը արվել է որպեսզի ապրանքների մատակարարում հնարավորինս կարճ ժամանակահատվածում իրականացվի:

Վերը նշված փաստերը ուսումնասիրելիս կարևոր է արձանագրել նաև այն փաստը, որ թե բոլոր գրությունները, որով Ընկերությունը ներկայացնում էր իրողությունը, որ ապրանքները գտնվում են ճանապարհին և ընդամենը 30 օրով պայմանագրի մատակարարման ժամկետները երակարաձգելու պարագայում՝ այն արդեն կգտնվեր Երևանում: Եվ որ ամենակարևորն է՝ ապրանքները Երևանում լինելուն պես, երբ արդեն Ընկերությունը կապ էր հաստատում ՊՆ-ի հետ ապրանքները մատակարարելու համար՝ այն Պատվիրատուին հանձնելու նպատակով՝ ՀՀ ՊՆ և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով պայմանագիրը դեռևս ՀՀ ՊՆ-ի կողմից միակողմանի չէր լուծվել /պայմանագիրը լուծվել է միայն 05.01.2022թ./:

Ընկերությունը ողջամտորեն ընկալել է, որ պատվիրատուն համաձայն է 30 օրացուցային օրով պայմանագիը երկարաձգելու հետ, հիմք ընդունելով Պատվիրատուի լռությունը, ինչը բխում է նաև ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի պահանջներից՝ հակառակ դեպքում գրավոր կիրազեկեր Ընկերությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է փաստել, որ կողմերի փաստացի փոխահամաձայնությամբ ապրանքի մատակարարումը կատարվել է ժամանակին, սակայն պատվիրատուն չընդունելով ապրանքը՝ խախտվել է Ընկերության իրավունքները և Ընկերությունը հայտնվել է անորոշության մեջ:

Այսպիսով ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ պարտավորությունը փաստացի Ընկերության կողմից կատարվել է: Եթե ընդունենք, որ այն կատարվել է ժամկետանց, ապա այս դեպքում առավելագույնը պետք է կիրառվեր տույժերի և տուգանքների հաշվակցում, բայց ոչ պայմանագրի լուծում, քանի որ պատվիրատուն ընթացքի մասին մշտապես տեղեկացված է եղել և երբեք առարկություն կամ դժգոհություն չի հայտնել: Ակնհայտ է, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված հանգեցրել է պայմանագրի լուծարման, ինչը չի փաստում Ընկերության կողմից ստանձնած պարտավորության կատարման նկատմամբ անբարխղճության դրսևում:

4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգիրք 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով

պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Այսպիսով ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Ակնհայտ է, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված, մասնավորապես՝ որևէ կերպ Ընկերության կողմից ներկայացված մատակարարման ժամկետը օրենքով նախատեստեսված կարգով երկարացնելու վերաբերյալ գրությանը չպատասխանելով, պայմանագրի փաստացի դադարեցված չլինելու պայմաններում ապրանքները Ընկերության ներկայացուցչի կողմից մատակարարելը, սակայն Պատվիրատուի կողմից անհիմն չընդունելով և ապրանքները մատակարարելու մասին տեղեկանալուց անմիջապես հետո պայմանագիրը լուծարելու պատճառով հնարավոր չի եղել ապրանքը մատակարարել: Հարկ ենք համարում կրկին ընդգծել, որ մատակարարման ժամկետը երկարացնելու գրությանը չպատասխանելը համարել ենք բավարարում, քանի որ մերժման դեպքում այլ միջոցներ կձեռնարկվեր պարտավորությունը կատարելու համար, միաժամանակ ծանոթանալով մերժման հիմքերին՝ միգուցե ձեռնարկվեր դրա բողոքարկման գործընթաց: Նման պայմաններում գտնում ենք, որ Ընկերությունը չի կարող գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվել՝ նկատի ունենալով նաև, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ նշված պատասխանատվությունը չի կարող հանգեցնել Ընկերությանը՝ գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով ամփոփելով վերոգրյալ, պետք է փաստել, որ պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Ակնհայտ է, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված, մասնավորապես՝ որևէ կերպ իմ կողմից ներկայացված մատակարարման ժամկետը օրենքով նախատեստեսված կարգով երկարացնելու վերաբերյալ գրությանը չպատասխանելով, պայմանագրի փաստացի դադարեցված չլինելու պայամաններում ապրանքները իմ կողմից մատակարարելը, սակայն

պատվիրատուի կողմից անհիմն չընդունելով և ապրանքները մատակարարելու մասին տեղեկանալոց անմիջապես հետո պայմանագիրը լուծարելու պատճառով հնարավոր չի եղել ապրանքը մատակարարել: Հարկ եմ համարում կրկին ընդգծել, որ մատակարարման ժամկետը երկարացնելու իմ գրությանը չպատասխանելը համարել եմ բավարարում, քանի որ մերժման դեպքում այլ միջոցներ կձեռնարկեի պարտավորությունս կատարելու համար, միաժամանակ ծանոթանալով մերժման հիմքերին՝ միգուցե ձեռնարկեի դրա բողոքարկման գործընթաց: Նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերությանը չի կարող գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվել՝ նկատի ունենալով նաև, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ նշված պատասխանատվությունը չի կարող հանգեցնել Ընկերությանը՝ գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ՕԼԷԴ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման՝ Ընկերությունը 10.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՕԼԷԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ նախորդ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել էինք, որ Ընկերությունը իրենից կախված ամենը արել է, որպեսզի կատարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պատվիատուի համապատասխան ստորաբաժանումների անգործությամբ պայմանավորված, մասնավորապես՝ որևէ կերպ իմ կողմից ներկայացված մատակարարման ժամկետը օրենքով նախատեստեսված կարգով երկարացնելու վերաբերյալ գրությանը չպատասխանելով, պայմանագրի փաստացի դադարեցված չլինելու պայամաններում ապրանքները իմ կողմից մատակարարելը, սակայն պատվիրատուի կողմից անհիմն չընդունելով և ապրանքները մատակարարելու մասին տեղեկանալոց անմիջապես հետո պայմանագիրը լուծարելու պատճառով հնարավոր չի եղել ապրանքը մատակարարել:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ ներկայացվում են հետևյալ ապացույցները.

1. Ինչպես արդեն նշել ենք նախորդ դիրքորոշմամբ, «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն մինչև պայմանագրի վերջնաժամկետի ավարտը դիմել է ՀՀ ՊՆ՝ մատակարարման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, սակայն որևէ պատասխան չի ստացվել: Այնուհետև առկա են բազմաթիվ այլ գրություններ՝ ուղղված ՀՀ ՊՆ՝ վերոհիշյալ խնդրի հետ կապված: Կից ներկայացվում է Ընկերության վերոհիշյալ գրությունների պատճենները :

2. Նախորդ դիրքորոշմամբ հայտնել էինք, որ ապրանքի մատակարարման ուշացման պատճառները հանդիսացել է բեռնափոխադրման հետ առաջացած խնդիրները: Մասնավորապես, «ԶԻԶԻ» ՍՊԸ բեռնափոխադրող ընկերությունը հայտնել է, որ Չինաստան-Հայաստան բեռնափոխադրող ընկերության ներկայացուցիչը, իր գրությամբ փաստում է /կցվում է/, որ ուղեբեռը սույն թվականի նոյեմբերի 18-ից գտնվում է ԻԻՀ Բանդար Աբբաս նավահանգստում, սակայն պայմանավորված համաշխարհային համավարակով /COVID-19/, ինչպես նաև առավել պայմանավորված Իրան-Հայաստան բեռնափոխադրման ճանապարհների փոփոխություններով՝ ՀՀ-ում տեղակայված նոր անցակետերով, որն առաջացրել է, ինչպես ճանապարհային խցանումներ, այնպես էլ Իրան-Հայաստան բեռնափոխադրումների կրճատում, ստեղծել է ֆորս-մաժորային իրավիճակ, ինչի արդյունքում մատակարարումը հետաձգվել է անորոշ ժամանակահատվածով: Սույն դիրքորոշմանը կցվում են բեռնափոխադրողներից ստացված վերոհիշյալ գրությունները:

3. Ինչպես արդեն նշել էինք նախորդ դիրքորոշմամբ, 2022 թվականի հունվարի 4-ին և 5-ին Ընկերության ներկայացուցիչը փորձել է կապ հաստատել Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման հետ՝ ապրանքները մատակարարելու նպատակով (ցանկանում եմ տեղեկացնել, որ մինչ այդ պահը մաքսային մարմինները ևս մի քանի օրով չեն աշխատել), սակայն կապ հաստատել չի հաջողվել: Արդյունքում Ընկերության ներկայացուցիչը համապատասխան փաստաթղթերով (հաշիվ-ապրանքագիր, ակտ, արձանագրություն) մոտեցել է մատակարարման հասցե, արդյունք չլինելու պատճառով այնուհետև մոտեցել է ՀՀ պաշտպանության նախարարություն, ք. Երևան, Բագրեվանդի 5 հասցե, ներքին հեռախոսահամարներով փորձել է կապ հաստատել համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ ապրանքի նմուշը փորձարկելու և այնուհետև ողջ խմբաքանակը հանձնելու նպատակով, սակայն արհեստական խնդիրների պատճառով այդպես էլ չի հաջողվել կապ հաստատել ապրանքն ընդունող Պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի հետ: Զանգեր են կատարավել անգամ ՀՀ ՊՆ թեժ գիծ՝ այս խնդրին լուծում տալու նպատակով:

Ի հավաստումն վերոհիշյալի՝ ներկայացնում ենք ՀՀ ՊՆ համապատասխան աշխատակիցներին և ՀՀ ՊՆ քաղաքային հեռախոսահարներին կատարված հեռախոսազանգերի արտատպումները, որոնք հավաստում են, որ «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն բոլոր եղանակներով փորձել է կապ հաստատել ՀՀ ՊՆ-ի հետ՝ ապրանքը հանձնելու նպատակով:

Կից ներկայացվում է նաև համապատասխան ակտը և արձանագրությունը, որը Ընկերությունը փորձել է ապրանքի հետ միասին հանձնել ՀՀ ՊՆ-ին, բայց ապարդյուն:

4. Կից ներկայացվում են նաև գնված ապրանքի համար կատարված վճարումները հիմնավորող փաստաթղթերը:

5. Կից ներկայացվում է մաքսային համապատասխան փաստաթուղթը, որը ապացուցում է, որ վերոհիշյալ ապրանքը 25.12.2021թ. Իրանից շարժվել է դեպի ՀՀ տարածք, հատել է ՀՀ սահմանը և մտել ՀՀ տարածք 03.01.2022թ., իսկ Արարատյան մաքսակետի պահեստից ողջ ծավալը հանվել 07.01.2021թ:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՕԼԷԴ» ՍՊԸ-ին ուղղված և 07.01.2022թ. թվագրված գրությունը Ընկերությանը ուղարկվել է 10.01.2022թ. և հրապարակվել www.gnumner.am կայքում նույնպես է 10.01.2022թ.:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, կրկին խնդրում ենք «ՕԼԷԴ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 10:15-ին և 02.02.2022թ. ժամը 09:50 հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 02.02.2022թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստին, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.01.2022թ. թիվ ՊՆ/02/133-2022 գրությամբ

հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Օլէդ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-3/8-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 5-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԳՀԱՊՁԲ-21-3/8-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 10.01.2022թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 10:15-ին և 02.02.2022թ. ժամը 09:50 հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Օլէդ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածի Գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 111 հատ հեռուստացույցի (հեռուստացույց 43) մատակարարումը նախատեսվում է 2021թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.:

3. «Օլէդ» ՍՊԸ-ին ուղղված 07.01.2022թ. ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը. «ՀՀ պաշտպանության նախարարության և

«Օլէդ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» գնման պայմանագրի շրջանակներում «Օլէդ» ՍՊԸ-ն 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 111 հատ հեռուստացույց (հեռուստացույց 43), սակայն չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Օլէդ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 98 604 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 89 640 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 1 792 794 ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 9000080000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 2 689 191 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում»:

4. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 10.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.01.2022թ. թիվ 26/26-1/948-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.01.2022թ. թիվ ՊՆ/02/133-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Օլէդ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի շրջանակներում հայտնած դիրքորոշումը՝ համապատասխան փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Օլէդ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր,

որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածի Գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 111 հատ հեռուստացույցի (հեռուստացույց 43) մատակարարումը նախատեսվում է 2021թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.:

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետը 21.12.2021թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՔՈՒ ԲՀԱ վարչության պետը 15.12.2021թ. է/փ ելք 2502 գրությամբ առաջարկել է ՀՀ ՊՆ և «ՕԼԷԴ» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-3/8-1 ծածկագրով պայմանագիրը 111 հատ «հեռուստացույց 43"» ապրանքատեսակի մասով միակողմանի լուծել՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1. կետի «բ» ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Հայտնում եմ նաև, որ համաձայն ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության կողմից ներկայացված հավաստման, հիշյալ պայմանագրի շրջանակներում ապրանքների ընդունման գործընթացը 15.12.2021թ. դրությամբ կասեցվել է և մատակարարումների իրականացման դեպքում դրանք չեն մուտքագրվի պահեստ:

Վերը նշվածից ելնելով՝ առաջարկում եմ հանձնարարել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչությանը՝ ՀՀ ՊՆ և «ՕԼԷԴ» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-3/8-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել»:

«Օլէդ» ՍՊԸ-ին ուղղված 07.01.2022թ. ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Օլէդ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» գնման պայմանագրի շրջանակներում «Օլէդ» ՍՊԸ-ն 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 111 հատ հեռուստացույց (հեռուստացույց 43), սակայն չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Օլէդ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 98 604 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 89 640 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 1 792 794 ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 9000080000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 2 689 191 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 10.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Այսպիսով՝ անդրադառնալով «Օլէդ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի քննության ընթացքում ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված գրություններին և «Զիզի» ՍՊԸ-ի (բեռնափոխադրումներ իրականացնող ընկերություն) կողմից «Օլէդ» ՍՊԸ-ին ուղղված գրությանը, հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Զիզի» ՍՊԸ-ն «Օլէդ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «***ԶԻԶԻ» ՍՊԸ-ի և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ.-ին ձեռք բերված Չինաստան-Հայաստան բեռնափոխադրման (թվով 111 հատ հեռուստացույց) պարտավորությունների շրջանակում Ձեզ մատակարարվելիք ապրանքների մատակարարման ժամկետի փոփոխություն է տեղի ունեցել անորոշ ժամանակով (մատակարարումը մինչև Հայաստան սահմանված է եղել մինչև սույն թվականի նոյեմբերի 26-ը) պայմանավորված համաշխարհային համավարակով (COVID 19), ինչպես նաև առավել պայմանավորված Իրան-Հայաստան բեռնափոխադրման ճանապարհների փոփոխություններով՝ ՀՀ-ում տեղակայված նոր անցակետերով, որն առաջացրել է, ինչպես ճանապարհային խցանումներ, այնպես էլ Իրան-Հայաստան բեռնափոխադրումների կրճատում, ստեղծելով ֆորս-մաժորային իրավիճակ:***

Հայտնում ենք Ձեզ, որ մատակարարվելիք ապրանքները սույն թվականի նոյեմբերի 18-ից գտնվում են ԻԻՀ Բանդար Աբբաս նավահանգստում, որը ըստ պլանավորված ժամանակացույցի պետք է Երևանում լիներ 8-10 օրացուցային օրվա ընթացքում, սակայն անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված անորոշ ժամկետով հետաձգվել է մատակարարումը, ինչի առթիվ հայցում ենք Ձեր ներողամտությունը և տեղեկացնում, որ ջանք չենք խնայում բեռնափոխադրումը հնարավորինս արագ և արդյունավետ կազմակերպելու համար: Հուսով ենք խնդիրը հնարավորինս արագ կկարգավորվի և իրավիճակով պայմանավորված Ձեզ լրացուցիչ կտեղեկացնենք»:

«Օլէդ» ՍՊԸ-ն 23.11.2021թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ.-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» պայմանագրի (թվով 111 հատ հեռուստացույց) շրջանակում ապրանքների մատակարարման ժամանակացույցը սահմանված է եղել մինչև 30.11.2021թ., համաձայն պայմանագրի Հավելված 1-ի:

«ԶԻԶԻ» ՍՊԸ բեռնափոխադրող ընկերությունը, որը հանդիսանում է «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» պայմանագրի շրջանակում «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի՝ Չինաստան-Հայաստան բեռնափոխադրող ընկերության ներկայացուցիչը, իր գրությամբ փաստում է (կից ներկայացվում է «ԶԻԶԻ» ՍՊԸ բեռնափոխադրող ընկերության գրությունը), որ ուղեբեռը սույն թվականի նոյեմբերի 18-ից գտնվում է ԻԻՀ Բանդար Աբբաս նավահանգստում, սակայն պայմանավորված համաշխարհային համավարակով (COVID 19), ինչպես նաև

առավել պայմանավորված Իրան-Հայաստան բեռնափոխադրման ճանապարհների փոփոխություններով՝ ՀՀ-ում տեղակայված նոր անցակետերով, որն առաջացրել է, ինչպես ճանապարհային խցանումներ, այնպես էլ Իրան-Հայաստան բեռնափոխադրումների կրճատում, ստեղծել է ֆորս- մաժորային իրավիճակ, ինչի արդյունքում մատակարարումը հետաձգվել է անորոշ ժամանակահատվածով:

Հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/8» ծածկագրով գնման գործընթացը տեղի է ունեցել սեպտեմբեր ամսին, իսկ այդ ժամանակահատվածում նման խնդիրներ առկա չեն եղել և հետագայում հնարավոր չէր կանխատեսել, որ կարող է առաջանալ ֆորս-մաժորային իրավիճակ, խնդրում եմ պայմանագրի ժամկետը երկարացնել մինչև 30 օրացուցային օրով, հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» պայմանագրի 7-րդ և 8.6-րդ կետերը:

«Օլէդ» ՍՊԸ-ն 28.12.2021թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի միջև 05.10.2021թ.-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-21-38-1» պայմանագրի (թվով 111 հատ հեռուստացույց) շրջանակում ապրանքների մատակարարման ժամանակացույցը սահմանված է եղել համաձայն պայմանագրի Հավելված 1-ի: Պայմանավորված համաշխարհային համավարակով (COVID 19), ինչպես նաև պայմանավորված եղանակային պայմաններով և խցանումներով ստեղծվել է ֆորս-մաժորային իրավիճակ (փաստաթղթերը կցվում են): Տեղեկացնում ենք Ձեզ, որ այս պահին ուղեբեռը գտնվում է ԻԻՀ և ՀՀ պետական սահմանին (Մեղրիի մաքսակետում): ***Բեռնափոխադրման ընկերության հավաստմամբ ապրանքները ՀՀ, ք. Երևան կլինեն երկօրյա ժամկետում, սակայն չկանխատեսված խնդիրներով պայմանավորված խնդրում ենք պայմանագրի կատարման համար տրամադրել առավելագույնը մեկշաբաթյա ժամկետ ապրանքները սահմանակետից հասցնել Երևան, մաքսազերծել և մատակարարել նշված հասցե***»:

«Օլէդ» ՍՊԸ-ն 10.01.2022թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 05.10.2021թ.-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» պայմանագրի (թվով 111 հատ հեռուստացույց) շրջանակում ապրանքների մատակարարման ժամանակացույցը սահմանված է եղել մինչև 30.11.2021թ., համաձայն պայմանագրի Հավելված 1-ի, իսկ պայմանագրի ընդհանուր գինը

կազմել է 17 927 943 ՀՀ դրամ: Ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/8» ծածկագրով գնման գործընթացի նախահաշվային գինը կազմել է 21 750 000 ՀՀ դրամ, արդյունքում տվյալ գնման գործընթացի շրջանակում Պատվիրատուն ունեցել է 3 822 000 ՀՀ դրամի տնտեսում: Սակայն պայմանավորված համաշխարհային համավարակով (COVID 19), ինչպես նաև պայմանավորված Չինաստան-Հայաստան, Իրան-Հայաստան ամանորյա նախաշեմին բեռնափոխադրումների կտրուկ աճով՝ նավահանգիստներում առաջացել են հերթեր, ստեղծվել է ֆորս-մաժորային իրավիճակ, ինչի արդյունքում մատակարարումը պայմանագրով սահմանված ժամանակահատվածում հնարավոր չի եղել կատարել: Հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/8» ծածկագրով գնման գործընթացը տեղի է ունեցել սեպտեմբեր ամսին և այդ ժամանակահատվածում նման խնդիրներ առկա չեն եղել, իսկ Ընկերությունը կատարել է տվյալ պայամանագրի շրջանակում իր առջև ստանձնած կատարվելիք վճարումները, պարտավորությունները և արել իրենից կախված հնարավորը, որպեսզի մատակարարվելիք ապրանքները սահմանված ժամանակահատվածում մատակարարվեն Պատվիրատուի նշված հասցե: Այդ իսկ պատճառով պրն. նախարար 28.12.2021 թվականի գրությամբ խնդրել էինք առավելագույնը մեկշաբաթյա ժամանակ տրամադրել ապրանքները մատակարարելու համար, քանի որ այդ ժամանակ ուղեբեռը փոխադրող ավտոմեքենան նոր էր հատել ԻՀՀ և ՀՀ միջպետական սահմանը: ***Դեկտեմբերի 29-ից ապրանքները գտնվում են ՀՀ., ք. Երևանում, ու այդ ժամանակահատվածից ի վեր Ընկերությունից կախված ամենը արվել է, որպեսզի ապրանքների մատակարարումը հնարավորինս կարճ ժամանակահատվածում կազմակերպվի՝ դիմել ենք համապատասխան ստորաբաժանումներին, սակայն չնայած ներդրված ջանքերին դեռևս հնարավոր չի եղել կազմակերպել ապրանքների մատակարարումը և ընդունումը:*** Խնդրում եմ ընդառաջել և հնարավորություն ընձեռնել ապրանքները մատակարարել, քանի որ Ընկերությունը մինչ այժմ կատարել է պետական գնումների պայմանագրերի շրջանակում ստանձնած բոլոր պարտավորությունները՝ առանց ժամանակացույցերի խախտման: «ԳՀԱՊՁԲ-21-3/8-1» պայմանագրի շրջանակում ներգրաված է բավականին մեծ վարկային միջոցներ և ներկայումս Ընկերությունը գտնվում է սննկացման եզրին, ինչի հետևանքով կլինեն աշխատատեղերի կարուստ, իսկ հնարավորություն ընձեռելու արդյունքում ապրանքների մատակարարման դեպքում Ընկերությունը հետագայում ևս կշարունակի ապրանքների պատշաճ մատակարարումը և գործունեությունը, իսկ Պատվիրատուն արդյունքում կխնայի 3 822 000 ՀՀ դրամ»:

Միևնույն ժամանակ, հարկ եմ համարում արձանագրել, որ ի հավաստումն վերը նշված գրությունների և ՍՑ-ՆԳ-2022/19 ընթացակարգի շրջանակներում վկայակոչված փաստարկների՝ Ընկերության կողմից մասնավորապես ներկայացվել է Պայմանագրով նախատեսված ապրանքի համար կատարված փոխանցման անդորրագրերը, տարանցման հայտարարագիրը, համաձայն որի՝ ապրանքը ՀՀ տարածք է հասել 03.01.2022թ.-ին, ինչպես նաև 05.01.2022թ. ՀՀ պաշտպանության նախարարության անվամբ դուրս գրված 111 հատ հեռուստացույցի (հեռուստացույց 43) մատակարարման թիվ Ա7633321017 հարկային հաշիվը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, Ընկերության կողմից Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունները, դրանց վերաբերյալ ներկայացված վերը նշված փաստական տվյալները՝ գտնում եմ, որ «Օլէդ» ՍՊԸ-ն նման պայմաններում չէր կարող կանխատեսել և բացառել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված գործողությունների ընթացքում վերը նշված խոչընդոտների առաջանալու հնարավորությունը և դրանցից բխող հետագա խնդիրները՝ կապված մատակարարման ժամկետի հետ, արդյունքում՝ Ընկերությունն օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը կատարելու հնարավորությունից:

Ընդ որում՝ հարկ եմ համարում արձանագրել, որ մինչև Պայմանագրի լուծելը Պատվիրատուն պարտավոր էր Պայմանագրի շրջանակում մատակարարվելիք ապրանքն ընդունել՝ անկախ մատակարարման ժամկետի ավարտից, քանի դեռ չի լուծվել Պայմանագիրը և հաշվարկել Պայմանագրով յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար նախատեսված տույժերը:

Վերոնշվածի հաշվառմամբ գտնում եմ, որ տվյալ դեպքում Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության կիրառմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2022թ. թիվ 26/26-1/948-2022 գրությամբ «Օլէդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**